Ինչպե՞ս գրանցվել օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգում

Քայլ 1. Մուտք գործեք fs.emis.am կայք: Սեղմեք «Մուտք» կոճակը (Նկար 1):

Նկար 1.



Քայլ 2. Կբացվի պատուհան համակարգ մուտք գործելու կամ գրանցվելու համար: Սեղմեք «Գրանցում» կոճակը: Մուտքագրեք էլեկտրոնային փոստի հասցե, գաղտնաբառ, այնուհետև կրկնեք արդեն իսկ մուտքագրած գաղտնաբառը (Նկար 2):

Բոլոր դաշտերը ենթակա են պարտադիր լրացման:

Նկար 2.



Քայլ 3. Տվյալները մուտքագրելուց հետո էկրանին կերևա հաղորդագրություն՝ «Հաշիվը ակտիվացված է» (Նկար 3):

Նկար 3.



Քայլ 4. Մուտք գործեք այն էլեկտրոնային փոստ, որը նշել եք գրանցվելիս: Բացեք «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնից» ստացված նամակը (Նկար 4): Եթե մուտքային նամակներում այն չգտնեք, ստուգեք նաև «Սպամ» բաժինը:

Նկար 4.



Քայլ 5. Սեղմեք «Ակտիվացնել» կոճակը: Այն Ձեզ կտեղափոխի ընդունելության համակարգի կայք: Էկրանին կերևա հաղորդագրություն այն մասին, որ Ձեր հաշիվն ակտիվացված է (Նկար 5): Սա նշանակում է, որ համակարգում Ձեր գրանցումն ավարտված է:

Նկար 5.



Հ.Գ. Ձեր օգտահաշիվ մուտք գործելու համար կայքի գլխավոր էջում սեղմեք «Մուտք» կոճակը, այնուհետև նորից «Մուտք» դաշտը (Նկար 6): Մուտքագրեք այն տվյալները, որոնցով գրանցվել եք համակարգում:

Նկար 6.



Կբացվի Ձեր օգտահաշիվը (Նկար 7), որի միջոցով էլ հետագայում կկարողանաք հայտ ներկայացնել որևէ ուսումնական հաստատություն, հետևել դրա ընթացքին, իրականացնել այդ հայտի հետ կապված մի շարք գործողություններ:

Նկար 7.



Ինչպե՞ս ընտրել բուհն ու դիմել

Քայլ 1. Համակարգի գլխավոր էջում սեղմեք «Բուհեր» կոճակը (Նկար 1):

Նկար 1.



Կբացվի նոր էջ, որտեղ ներկայացված են համակարգում առկա բոլոր ուսումնական հաստատությունները (Նկար 2) :

Նկար 2



Քայլ 2. Սեղմեք այն հաստատության անվան վրա, որտեղ ուզում եք ուսանել:

Կբացվի տվյալ հաստատության էջը, որտեղ կարող եք տեսնել մասնագիտությունների ցանկը: Յուրաքանչյուր մասնագիտության հետ նշված կլինի նաև կրթական աստիճանը, օրինակ՝ մագիստրատուրա (Նկար 3):

Նկար 3.



Քայլ 3. Սեղմեք նախընտրած մասնագիտության անվան վրա, կբացվի նոր պատուհան (Նկար 4), որտեղ ներկայացված կլինեն տվյալներ հաստատության, մասնագիտության, կրթական աստիճանի մասին, կլինի նաև դիմելու հնարավորություն: Սեղմեք «Ընդունելություն» կոճակը:

Նկար 4.



Քայլ 4. Կբացվի հայտ ներկայացնելու էջը (Նկար 5), որտեղ պետք է մուտքագրեք անհրաժեշտ բոլոր տվյալներն ու ամեն դաշտից հետո պարտադիր սեղմեք «Պահպանել» կոճակը:

Նկար 5.



Բոլոր դաշտերը լրացնելուց և «Ֆայլեր» դաշտում (Նկար 6) անհրաժեշտ փաստաթղթերը կցելուց հետո պետք է սեղմեք էջի ներքևի աջ հատվածում պատկերված դեղին՝ «Պահպանել» կոճակը:



Հ.Գ. Այս գործողությունից հետո հայտը կերևա անձնական օգտահաշվի «Հայտեր» բաժնում (Նկար 7): «Գործողություն» դաշտում առկա կոճակների միջոցով հնարավորություն կունենաք խմբագրել Ձեր կողմից ներկայացված հայտը կամ ջնջել, այսինքն՝ չեղարկել այն (կախված հայտի կարգավիճակից):

Նկար 7.



Ինչպե՞ս կատարել ընտրությունը ըստ մասնագիտության

Օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգ մուտք գործելուց հետո կբացվի գլխավոր էջը, որտեղ ներկայացված են «Բուհեր» և «Կրթական ծրագրեր» ենթաբաժինները:

Քայլ 1. Սեղմեք «Կրթական ծրագրեր» կոճակը:

Նկար 1.



Կբացվի պատուհան, որտեղ ներկայացված են ոլորտները:

Նկար 2.



Քայլ 2. Ընտրեք այն ոլորտը, որի մասնագիտություններով հետաքրքրված եք: Կբացվի պատուհան, որտեղ ներկայացված են տվյալ ոլորտի մասնագիտությունները, հնարավոր է ֆիլտրել դրանք, որոնել և ընտրել ցանկից: Ցանկում՝ մասնագիտության անվան հետ միասին նշված է նաև՝ կրթական ո՞ր աստիճանի համար եք դիմում:

Նկար 3.



Քայլ 3. Սեղմեք Ձեր ընտրած մասնագիտության անվան վրա, այնուհետև «Ընդունելություն» կոճակը:

Նկար 4.



Եթե տվյալ մասնագիտության համար արդեն իսկ հայտ եք ներկայացրել, կպատկերվի այդ մասին հաղորդագրություն:

Նկար 5.



** Ձեր կողմից լրացված հայտը կարող եք գտնել Անձնական էջի «Հայտեր» ենթաբաժնում:

Քայլ 4. Եթե տվյալ մասնագիտության համար Ձեր կողմից ներկայացված հայտեր չկան, կբացվի նոր հայտ ստեղծելու էջը: Լրացրեք պահանջվող բոլոր տվյալները:

Նկար 6.



Յուրաքանչյուր բաժին լրացնելուց հետո անհրաժեշտ է սեղմել «Պահպանել» կոճակը, որից հետո կերևա հաղորդագրություն այն մասին, որ գործողությունը կատարված է:

Նկար 7.



Բոլոր դաշտերը լրացնելուց և պահպանելուց հետո «Ֆայլեր» հատվածում պետք է կցել անհրաժեշտ փաստաթղթերը՝ լուսանկար, անձնագիր, վկայական և այլն: **<u>Կցվող փաստաթղթերը պետք է լինեն PDF ֆորմատի, այլապես համակարգը թույլ չի տա դրանք ներբեռնել</u>**:

Նկար 8.



Քայլ 5. «Ֆայլերն» էլ պահպանելուց հետո Ձեր հայտը կհայտնվի Անձնական էջի «Հայտեր» ենթաբաժնում: Կերևա հայտի համարը, ուսումնական հաստատությունը, կրթական աստիճանը, մասնագիտությունը, կարգավիճակ դաշտում կգրվի, որ հայտն ուղարկվել է (Նկար 9):

Ներկայացված հայտն այս փուլում դեռևս կարող եք չեղարկել կամ խմբագրել:

Նկար 9.



Ինչպե՞ս փոխել գաղտնաբառը և/կամ էլ. փոստի հասցեն

Քայլ 1. Մուտք գործեք Համակարգ և գլխավոր էջի աջ վերևի անկյունից մուտք գործեք «Կարգավորումներ» բաժին (Նկար 1):

Կբացվի պատուհան, որտեղ կարող եք փոխել գրանցվելիս Ձեր կողմից մուտքագրված էլ. փոստի հասցեն և/կամ գաղտնաբառը (Նկար 2):

Նկար 1.



Նկար 2.



Քայլ 2. Էլ. փոստի հասցեն փոխելու համար պետք է ջնջեք նախորդը, լրացնեք նոր հասցեն և սեղմեք «Փոխել» կոճակը: Դաշտը դատարկ թողնել չեք կարող, արդեն իսկ մուտքագրված էլ. փոստի հասցեն կրկնել չեք կարող, էկրանին կերևա հաղորդագրություն այն մասին, որ գրել եք Ձեր ընթացիկ հասցեն (Նկար 3):

Նկար 3.



Քայլ 3. Գաղտնաբառը փոխելու համար բացված էջում սեղմեք «Փոխել գաղտնաբառը» կոճակը (Նկար 4): Կբացվի պատուհան, որտեղ անհրաժեշտ է մուտքագրել ընթացիկ գաղտնաբառը, գրել նորն ու կրկնել այն: Այնուհետև պետք է սեղմել «Փոխել» կոճակը:

Նկար 4.



Էկրանին կերևա հաղորդագրություն այն մասին, որ գաղտնաբառի փոփոխությունը կատարված է (Նկար 5):

Նկար 5.



Հ.Գ. Օգտահաշվում այլ գործողություններ իրականացնելու համար անհրաժեշտ կլինի համակարգ մուտք գործել նոր տվյալներով՝ փոփոխված գաղտնաբառով և/կամ էլ.փոստի հասցեով:

Ինչպե՞ս վերականգնել գաղտնաբառը

Եթե չեք կարողանում մուտք գործել համակարգ, պատկերվում է հաղորդագրություն սխալ գաղտնաբառ մուտքագրելու հավանականության մասին, ապա կարող եք վերականգնել Ձեր գաղտնաբառը:

Քայլ 1. Սեղմեք «Մոռացել եմ գաղտնաբառը» կոճակը (Նկար 1):

Նկար 1.



Քայլ 2 . Կբացվի «Գաղտնաբառի վերականգնում» պատուհանը (Նկար 2): Պետք է մուտքագրեք այն էլ. փոստի հասցեն, որով գրանցվել եք համակարգում, այնուհետև սեղմեք «Ուղարկել» կոճակը:

Նկար 2.



Քայլ 3. Մուտք գործեք էլ. փոստ, մուտքային նամակների մեջ գտեք «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնից» ստացած հաղորդագրությունը:
Սեղմեք «Փոխել գաղտնաբառը» կոճակը (Նկար 3):

Նկար 3.



Քայլ 4. Կբացվի պատուհան (Նկար 4), որտեղ անհրաժեշտ է մուտքագրել նոր գաղտնաբառ և կրկնել այն: Այնուհետև համակարգչի ստեղնաշարի վրա սեղմեք Enter կոճակը:

Կպատկերվի հաղորդագրություն այն մասին, որ փոփոխությունը կատարված է (Նկար 5):

Նկար 4.



Նկար 5.



Ինչպե՞ս չեղարկել կամ խմբագրել հայտը

Քայլ 1. Համակարգի գլխավոր էջից մուտք գործեք «Հայտեր» բաժին (Նկար 1, նկար 2):

Նկար 1.



Նկար 2



Հայտ N	Ուսհաստատության	Դիմել է	Բակալավրիատ / մագիստրատուրա	Մասնագիտություն	Կարգավիճակ	Գործողություն
	Տեստային	Ընդունելություն	Բակալավրիատ	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	Չեղարկված է	
	State Academy of Fine Arts of Armenia	Ընդունելություն	Բակալավրիատ	Դիզայն	Չեղարկված է	
	State Academy of Fine Arts of Armenia	Ընդունելություն	Բակալավրիատ	Քանդակագործություն	Չեղարկված է	
	State Academy of Fine Arts of Armenia	Ընդունելություն	Բակալավրիատ	Գեղանկարչություն	Չուղարկված	

Այստեղ հասանելի են Ձեր բոլոր հայտերը՝ անկախ դրանց կարգավիճակից՝ ուղարկած, չեղարկած կամ սևագիր: Ներկայացված են նաև տվյալներ ուսումնական հաստատության, ընդունելության տեսակի, կրթական աստիճանի և մասնագիտության վերաբերյալ: Այն հայտերը, որոնք ուղարկված են, ունեն խմբագրման և/կամ հեռացման հնարավորություն:

Քայլ 2. «Գործողություն» դաշտից ընտրեք աղբամանի կոճակը, եթե ուզում եք ջնջել/հեռացնել տվյալ հայտը (Նկար 3):

Նկար 3.



Կպատկերվի հաղորդագրություն «Համոզվա՞ծ եք» (Նկար 4): Հաստատելու համար սեղմեք OK:

Նկար 4.



«Հայտեր» էջը կթարմանա: Տվյալ հայտի կարգավիճակը կդառնա «Չեղարկված է»: «Գործողություն» դաշտում տխուր դեղին էմոջի կհայտնվի (Նկար 5):

Նկար 5.

Քայլ 3. Հայտը խմբագրելու համար «Գործողություն» դաշտից ընտրեք գրիչի կոճակը (Նկար 6): Կբացվի տվյալ հայտի էջը (Նկար 7) :

Նկար 6.



Հայտ N	Ուսհաստատության	Դիմել է	Բակալավրիատ / մագիստրատուրա	Մասնագիտություն	Կարգավիճակ	Գործողություն
	Տեստային	Ընդունելություն	Բակալավրիատ	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	Չեղարկված է	
	State Academy of Fine Arts of Armenia	Ընդունելություն	Բակալավրիատ	Դիզայն	Չեղարկված է	
	State Academy of Fine Arts of Armenia	Ընդունելություն	Բակալավրիատ	Քանդակագործություն	Չեղարկված է	
	State Academy of Fine Arts of Armenia	Ընդունելություն	Բակալավրիատ	Գեղանկարչություն	Չուղարկված	

Նկար 7.



Քայլ 4. Փոփոխեք լրացված տվյալները «Անձնական տվյալներ» և/կամ մյուս դաշտերում և սեղմեք «Պահպանել» կոճակը: Կպատկերվի հաղորդագրություն այն մասին, որ գործողությունը կատարված է (Նկար 8):

Նկար 8.



Հ.Գ. Տվյալների թարմացման մեջ համոզվելու համար կարող եք կրկին մուտք գործել «Հայտեր» բաժին և սեղմել նշված հայտի խմբագրման կոճակը: